# Ըստ Ադրբեջանի ժողճակատի մի բանբերի «հայերը չեն ուզում հանդարտվել»

Ժխտելով հայերի տեղահանման որեւէ ծրագրի գոյությունը, Ադրբեջանի ժողճակատի բանբեր Աբուլֆազ Ալիեւը *«Լոս Անջելես թայմզ»* թերթի հուլիսի 8-ի համարում կատարած իր հայտարարության մեջ լարվածությունը թուլացնելու մեղքը բարդում է հայկական կողմի վրա, ավելացնելով, թե *«այս պատերազմը տեղի է ունենում ամեն օր եւ հայերը չեն ուզում հանդարտվել: Սխալ ճիշտ լինեի ասել, որ այսօր մեծ լարվածություն է տիրում շրջանում կամ ասել, թե լարվածություն չկա»:*

Այսուհանդերձ, թերթը, որի հոդվածը կրում է *«Վայրագությունը դարձյալ բռնկվում է հայ-ադրբեջանական սահմանագծի վրա»* վերնագիրը եւ Մայքլ Փարքսի ստորագրությունը, նոր լարվածության պատճառ է համարում Շահումյանի շրջանում արտակարգ դրությունը վերացնելու մասին նախագահ Գորբաչովի վերջին հրամանագիրը: Վկայակոչելով հայկական աղբյուրներ, հոդվածագիրն ասում է, թե կիրակի երեկոյան արդեն Շահումյանի բախումները լարվածություն էին առաջացրել հայ-ադրբեջանական ամբողջ սահմանագծի երկայնքով: Հայերը վախենում էին, թե իրենց դուրս կմղեն Շահումյանի շրջանում մնացած երեք գյուղերից:

*«Թվում է, թե Շահումյանի շրջանի հայերը կրելու են Սումգայիթի հայերի ճակատագիրը»*, վկայակոչում է թերթը Հայաստանի խորհրդարանի կողմից Գորբաչովին ուղղված դիմումը, ավելացնելով, որ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանն իր հրավիրած արտահերթ նիստում ամփոփել էր ապրիլ-մայիս ամիսների հակահայ գործողությունների ընթացքում հայկական կողմի կրած վնասները. 35 հոգի սպանված, 120 վիրավոր, 410 պատանդ, որոնցից 110-ը դեռեւս ազատ չեն արձակվել, եւ ավելի քան 5000 հայեր՝ բռնագաղթված 20 գյուղերից:

Թերթն ավելացնում է, թե արտակարգ դրությունը վերացնելով, Մ. Գորբաչովն անցյալ շաբաթ հայտարարել է, թե ինքը կարծում է, որ իրադրությունը կայուն է շրջանում եւ, թե ինքը զգուշացրել է Ադրբեջանին, որ հարգի հայ ազգաբնակչության անվտանգությունը երաշխավորելու իր հանձնառությունը: Վերջում թերթը հիշեցնում է, որ Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովը խոստում էր տվել Գորբաչովին, թե *«բոլոր միջոցները ձեռք կառնվեն Ղարաբաղի կոնֆլիկտի գոտում ապրող մարդկանց անվտանգությունն ապահովելու եւ տեղաբնակների առանց որեւէ պատճառի տարաբնակեցնելն արգելելու կապակցությամբ»:*

■